

Տանք ուրիշ մէկ տեսութիւն այս ուղղութեան ՚ա ՚ին .
ու դ՛նենք մեր եզրակացութիւնը :

Կայ հրատարակութիւն մը «Ռուս կայսերական աշխարհագրական ընկերութեան Կովկասեան բաժանմունքի տեղեկութիւններ» անունով :

Այս հրատարակութեան 1904 թուականի N^o 1ին մէջ տպուած է Հ. Առաքելեանի մի դասախօսութիւն , («Քիւրդերը Պարսկաստանի մէջ») վերնագրով :

Դասախօսի կարծիքով , Քիւրդերը կը կազմեն խառնուրդ զանազան ազգերու և ցեղերու , Մեախացուց , Մանգոյնբու , Թաթարներու , Հայերու , Թուրքերու ու Արարներու :

Ռուս հրատարակութեան խմբագրական կազմը այս կարծիքին դէմ հետեւեալ դիտողութիւնն առաջ կը բերէ .

«Այդ խառնուրդը յամենայն դէպս ելծէ կարելի է այսպէս ըսել , Ֆիզիքական չէ , մեխանիքական չէ , այլ քիմիական : Քիւրդիստանի ընկիները վերամշակել են բոլոր իրենց մէջ մտած ցեղական տարրերը որոշ քիւրդական ախպի՝ որը չէ կարելի խառնել ուրիշների հետ , և որի մասին գրուածներ կարելի է գտնել գրքերի մէջ և յօդուածներու՝ նուիրուած Քիւրդերին : Կորիզը անկասկած Մեղիական է . ինչպէս ցոյց կու տայ Քիւրդական լեզուն :»

Մեր եզրակացութիւնը . — Մինչ արտեղ առաջ բերուած բոլոր ուսումնասիրութիւններուն վրայ ձգուած յետադարձ ակնարկ մը բաւական է հաստատել , որ Քրդութիւնը եղած է նախ արեւակցական , ազգակցական հասարակութիւն մը՝ որ չէր կարող լինել առանց բնակավայրի կամ հայրենիքի , և ապա արաւետ հաւաքոյներով քաղաքական հասարակութիւն մը՝ ուրիշի հայրենիքին մէջ :

Մեր եզրակացութիւնը չէր կրնար տարբեր ըլլալ քան Ռուս Կայս . Աշխարհագրակ . Ընկերութեան հրատարակութեան խմբագրական կազմի դիտողական եզրակացութիւնը՝ զոր առաջ բերինք ճիշտ վերե : Մեր կողմէն միայն կ'աւելցնենք , — «Ինչպէս բոլոր հասարակագէտները կը հաստատեն , թէ չկայ